Սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների առաջացման գործում մեծ դեր ունեն ռիսկի գործուները՝ հիպոկինեզը, հիպերտենզիան, ծխելը, ճարպակալումը, ժառանգականությունը, սրբեսը և այլն: Այս հիվանդությունների կանխարգելումը մեծամասամբ կախված է գիտակցական վերաբերմունքով սեփական առողջության նկատմամբ: Ըստ հաշվարկների՝ դեռ 19-րդ դարի կեսերին 94% էներգիան երկրի վրա առաջանում է կենդանիների և մարդկանց մկանային աշխատանքով, իսկ այժմ միայն 1%:

1. Կախված մարդու ցածր էներգետիկ ակտիվությունից պակասում է O2 տրանսպորտը, մեծանում է լիարժենությունը կոնցենտրացիան արյան մեջ, որին էլ նպաստում է մարդկանց նյութափոխանակության վիճակի բարելավվումը
2. Օգտագործվող և ծախսվող էներգիայի անհավասարություն՝ շատ կալորիա բնորում են, քիչ ծախսում, որն էլ բերում է քաշի ավելացման
3. Աշխատանքի ուրբանիզացիան և ավտոմատիզմը բերում է մարդկանց հոգեկանոցինալ լարվածության

Անթույլատրելի է մարմնի զանգվածի նվազումը միայն ի հաշիվ օգտագործվող կալորիաների՝ կտրուկ դիետաները, ոչ լիարժեք սնունդը, չափից շատ ուտելը կարող է դառնալ փոխանակության խանգարման և իմունիտեսի թուլացման պատճառ:

Ֆիզկուլտուրայով զբաղվելը ազդող միջոց է, որը ավելացնում է կյանքի տևողությունը և բարելավում է այն: Աշխատող մկաններում բարձրանում է թթվային ռեակցիաները մինչև 50 անգամ և առաջանում է ծանրաբեռնվածություն սննդամթերքի տրանսպորտի համակարգում: Մկանային կրծատման ժամանակ գլխավոր աղբյուր է օրգանիզմն երանուծվող ածխաջրերը և ճարպերը:

Մարզված մարդկանց մոտ թոքերի կենսական տարրողությունը բարձր է, և նրանք O2 ավելի քիչ են ծախսում ծանրաբեռնվածության ժամանակ, և թոքերի օդափոխման վերականգնումը ավելի արագ է լինում: Սրտի միանման կծկումների ժամանակ O2 օգտագործումը տղ. մոտ ավելի է, քան կանաց, ֆիզիկապես պատրաստված մարդկանց մոտ ավելի է քան անշարժ կենսակերպ վարողների մոտ: Դաշվի առնելով կոնստիտուցիոնալ տիպերը՝ ասթենիկ, նորմոսթենիկ, հիպերսթենիկ, անթրիոպոմետրիայի տվյալները՝ քաշ, հասակ, ա/թ, շնչառության հաճխությունը, ԷՍԳ, սրտի աշխատանքի հաճախությունը մենք կատարեցինք փորձ ըստ Մաստերի: Չափում ենք ա/թ, պուլս, սրտի հաճախությունը մինչև ծանրաբեռնվածությունը և դրանից հետո մարզվածների և չմարզվածների մոտ:

Փորձին ընդգրկված էին 30 մարդ՝ 14 աղջիկ և 16 տղա, որոնցից միայն 12 էին մարզված: Մենք համոզվեցինք, որ մարզվածների մոտ ավելի արագ է վերականգնվում շնչառության և սրտի աշխատանքի հաճխությունը, պուլսը ծանրաբեռնվածությունից հետո, քան չմարզվածների: Ֆիզիկական վարժությունները բարձրացնում են ոչ միայն ֆիզիկական այլև նտավոր աշխատունակությունը:

ԹՐԹՈՍԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅՈՒՄ

Ն. ՔՐԻՍՏՈՎԻԿՈՐՅԱՆ

ՀԲԻ մարդու նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոն, գիտ. դեկ. Ծ.Ի. Աղամյան

Գիտատեխնիկական առաջընթացի արդի շրջանում օրգանիզմի վրա թրթռման ազդեցության ուսումնասիրությունը ձեռք է բերել էկոլոգիական և հիգիենիկ նշանակություն: Թրթռման հետևանքով օրգանիզմում առաջանում են տարաբնույթ խանգարումներ, որոնք փոխում են օքսիդա-վերականգնած գործընթացների մակարդակը, ինչը կարևոր նշանակություն ունի օրգանիզմի ռեգիստերատուրյունը բարձրացնելու համար: Կենսաքիմիական և ֆիզիոլոգիական փոփոխությունները, որոնք առաջանում են ֆիզիկական գործոնների ազդեցության դեպքում, անկասկած փոխում են հեմոպոետիկ հյուսվածքի գործառական վիճակը, արյան որակական և քանակական կազմը: Թրթռման ազդեցության դեպքում ծայրանասային արյան ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ կան հակասական կարծիքներ: Ուստի սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել հեմոպոեզի ցուցանիշների փոփոխությունների բնույթը թրթռման ազդեցության դինամիկայում: Հետազոտությունները կատարվել են միևնույն կշռի և սեռի ճագարների վրա: Թրթռումը կատարվել է ԵԲ-1 մակնիշի վիրրուտենդով, օրական 2 ժամ, 30 օր, հաճախությունը 60 Հց: Ուսումնասիրվել են էրիթրոցիտների, ռեթիկուլոցիտների, լեյկոցիտների հեմոգլոբինի քանակը, գունացուցիչը, լեյկոցիտային քանածը: Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ թրթռումն առաջացնում է էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակի տևական նորմոքում շարժ: Թրթռման ազդեցության սկզբնական շրջանում արյան վերաբաշխման սիմպաթիկ մեխանիզմների ակտիվացման հետևանքով դիտվել է էրիթրոցիտների, հեմոգլոբինի, ռեթիկուլոցիտների և լեյկոցիտների քանակի ավելացում ի հաշիվ նեյտրոֆիլների: Հետագա օրերին հեմոպոեզի պրոլիֆերատիվ և հասունացման պրոցեսների ճնշման հետևանքով ստեղծվում է էրիթրոցիտային հավասարակշռության չափավոր ցածր մակարդակ: Լեյկոցիտային քանածնում դիտվել է արտահայտված լինֆո-էոզինոպենիա:

Արյան քսուքներում գերակշռել են լինֆոցիտների նեղ ցիտոպլազմային ձևերը: Վերջինս լինֆոցիտային ակտիվության ցուցանիշ է և արտացոլում է հարմարվողական պրոցեսների ընթացքի լարվածությունը: Թրթռման ազդեցության դինամիկայում հեմոպոեզի ցուցանիշների դիտվող շարժերը, ըստ երևոյթին պայմանավորված են ենթատեսաթմբի վեգետատիվ կենտրոնների ֆունկցիոնալ փոփոխություններով:

Բանալի բառեր՝ թրթռում, էրիթրոցիտ, ռեթիկուլոցիտ, հեմոգլոբին, լեյկոցիտ:

L. Կարապետյան

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետ Գիտ. դեկ.կգթ.դոցենտ Ծ. Ի. Աղամյան

Կլինիկական և փորձարարական հետազոտությունները վկայում են, որ արյան համակարգի հոմեոստազի խանգարման ժամանակ առավել արդյունավետ միջոցը ուսկրածութի փոխպատվաստումն է: Վերջինս սերտորեն կապված է օրգանիզմի վրա ուսկրածութի արտահանման ազդեցության ուսումնասիրության հետ: Ուստի սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել էրիթրոպուեզի մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների փոփոխությունների դինամիկան ուսկրածութ արտահանելուց հետո: Հետազոտությունները կատարվել են միևնույն սեռի և կշռի ճագարների վրա: Ուսկրածութը արտահանվել է ազդրոսկրից, սրունքից, զստոսկրից 6նլ կգ կշռին կասիրսկու ասեղի օգնությամբ:

Նորմայում և ուսկրածութի արտահանման 5, 10, 15, 20, 25, 30 և 45 օրերին ուսումնասիրվել է էրիթրոցիտների, հեմոգլոբինի, ռեթիկուլոցիտների քանակը, ռեթիկուլոցիտների հասունացման արագությունը, ուսկրածութի էրիթրոիդ ծիլի բջջային կազմը: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսկրածութի արտահանման 5-րդ օրը էրիթրոցիտների քանակը ելակետի համեմատությամբ իջել է 20%-ով ($P<0.001$), իսկ հեմոգլոբինը 24%-ով ($P<0.01$):

Ռեթիկուլոցիտների քանակը կազմել է 130%, իսկ նրանց հասունացման արագությունը 125%: Հետասպիրացիոն շրջանի 10-րդ օրը ծայրամասային արյան ցուցանիշները 5-րդ օրվա համեմատ էական փոփոխություններ չեն կրել: Նշված ժամկետում միելոգրամմայում դիտվել է էրիթրոիդ ծիլի բջջների քանակի իջեցում: Հետազոտության 20-րդ օրը դիտվել է ռեթիկուլոցիտների քանակի իջեցում և դրանց հասունացման արագության դանդաղում (70.8%, 80% համապատասխանաբար): Այսպիսով, ստացված տվյալների վերլուծությունից հետևում է, որ նշված քանակով ուսկրածութի արտահանումը առաջացնում է էրիթրոցիտների և հեմոգլոբինի տևական նորմոքրում իջեցում և որպես փոփոխություղական ռեակցիա չափավոր ռեթիկուլոցիտով:

Հետազոտության 15-30 օրերի ընթացքում ուսկրածութի էրիթրոիդ ծիլի պրոլիֆերատիվ և հասունացման պրոցեսների դանդաղեցման հետևանքով դիտվել է ռեթիկուլոցիտոպենիա և ռեթիկուլոցիտների հասունացման արագության դանդաղում: Ուսկրածութ արտահանած օջախում իջել է էրիթրոիդ շարքի հեմոգլոբին չպարունակող բջջների քանակը: Այդ փոփոխություններին համապատասխան ծայրամասային արյան մեջ դիտվել է էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակի իջեցում: Ծայրամասային կարմիր արյան ցուցանիշների ելակետային մակարդակի վերականգնում դիտվել է 45-րդ օրը, իսկ ուսկրածութում էրիթրոիդ ծիլի բջջների քանակը դեռևս գտնվել է ցածր մակարդակի վրա, ինչը վկայում է պրոլիֆերատիվ և հասունացման պրոցեսների ճնշման մասին:

Բանալի բառեր՝ ուսկրածութ, էրիթրոցիտ, ռեթիկուլոցիտ, հեմոգլոբին

ՄԻԼԻՄԵՏՐԱՆՈՑ ՏԻՐՈՒԹՅԻ ԷԼԵԿՏՐԱՍՎԱԳՆԻՍԱԿԱՆ ճԱՌԱՎԱՅԹԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻԹՐՈՊՈԵԶԻ ՎՐԱ ՌԱՍԿՐԱԾՈՒԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ԴԵՊՔՈՒՄ

Ա. Խաչատրյան

ՀԲԻ մարդու նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոն, գիտ. դեկ. Ծ.հ. Աղամյան

Այսան համակարգի տարբեր հիվանդությունների բուժման առավել արդյունավետ միջոցը միելոթերապիան է: Ուսկրածուծի արտահաննան դեպքում առաջանում են արյունաստեղծնան խանգարումներ: Ուստի արդիական է համարվում ոսկրածուծ արտահաննելուց հետո կիրառել միջոցներ, որոնք կնպաստեն արյունաստեղծ համակարգի փոխհատուցողական մեխանիզմների ընդլայնման և հենոպոեզի ցուցանիշների ելակետային մակարդակի վերականգնման ժամկետների կրծատմանը:

Վերջին տարիներին տարբեր հիվանդություններ բուժելու նպատակով, որպես ֆիզիոթերապեֆտիկ միջոց, կիրառվում է ցածր ուժգնության էլեկտրամագնիսական ալիքները: Ուստի սույն աշխատանքի նպատակն է եղել, ոսկրածուծի մասնակի հեռացման դեպքում ուսումնասիրել էրիթրոպոեզի ցուցանիշների ռեգեներատիվ պրոցեսների զարգացման առանձնահատկությունները էլեկտրամագնիսական ճառագայթների ազդեցության դինամիկացումը: Դետազոտությունները կատարվել են միևնույն կշռի, տարիքի և սեռի ճագարների վրա:

Ոսկարծուծը արտահանվել է ազդրոսկրից և զստոսկրից (6մլ կգ/կշռին) կասիրսկու ասեղով: ճառագայթումը կատարվել է Գ-141 գեներատորով, հաճախությունը՝ 53,3 Հից, տևողությունը՝ 60 րոպե: Նորմայում և ոսկրածուծի արտահատման ու ճառագայթման դինամիկայում ուսումնասիրվել են էրիթրոցիտների, հեմոգլոբինի, ռեթիկուլոցիտների քանակը, գունացուցիչը: Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ ոսկրածուծ արտահաննելուց հետո միլիմետրանոց տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների բազմակի կիրառումը առաջացնում է էրիթրոպոեզի ակտիվացում, տևական ռեթիկուլոցիտոց, ռեթիկուլոցիտների հասունացման արագացում, էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակի աճ:

Վերջինս հիմք է տալիս ենթադրելու, որ միլիմետրանոց տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների բազմակի կիրառման դեպքում օրգանիզմը մորիլիզացնում է իր պահուստային ուժերը, որոնք ուղղված են ռեգեներատիվ պրոցեսների ուժեղացմանը և փոխհատուցողական մեխանիզմների սահմաների լայնացմանը, որի հետևանքով կրծատվում է արյան ցուցանիշների ելակետային մակարդակի վերականգնման ժամկետները:

Բանալի բառեր՝ էլեկտրամագնիսական ալիքներ, ոսկրածուծ, էրիթրոցիտ, ռեթիկուլոցիտ, հեմոգլոբին:

ԾԱՅՐԱՄԱՍՍՅԻՆ ԱՐՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՏԱՌԻՐԻՆԻ ԵՎ ԳՅՈՒՐԶԱՅԻ ԹՈՒՅՆԻ ԿԱՄԱԿՅՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ն. Խաչատրյան

ՀԲԻ մարդու նորմալ ֆիզիոլոգիայի ամբիոն, գիտ. դեկ. Ծ.Ի. Աղամյան

Օձերի խայթոցները հաճախ ուղեկցվում են մահացու ելքով: Հայաստանի լեռնային և կիսալեռնային վայրերի բնակիչների համար հատկապես մեծ վտանգ է ներկայացնում գյուրզայի խայթոցը: Թույնի ազդեցությամբ զարգանում է հեմոռօքիկ այտուցվածություն, հյուսվածքների նեկրոզ, ներանոթային հեմոլիզ, ակտիվանում է 10-րդ գործոնը և զարգանում է արյան համատարած ներանոթային մակարդման համախտանիշ: Ուստի կարևորում է թունավորման դեպքում հակաթունային ազդեցությամբ օժտված նյութերի կիրառումը: Վերջին տարիներին հետազոտողների ուշադրությունը մեծացել է տառւրինի նկատմամբ:

Այն հակաօքսիդանտային, հակաթունային, անոթալայնիչ հատկությամբ օժտված արգելակող նեյրոմիջնորդանյութ է: Ուստի ներկայացվող աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել հեմոպենզի ցուցանիշների փոփոխությունների բնույթը՝ գյուրզայի թույնի ազդեցության դեպքում, և կիրառել տառւրինը որպես հակաթունային ազդեցությամբ օժտված ամինարթրու: Փորձերը կատարվել են 200-250գ կշիռ ունեցող լաբորատոր առնետների վրա: Նորմայում թույնի, ինչպես նաև թույնի և տառւրինի համակցված ազդեցության 30,60, 120-րդ րոպեներին ուսումնասիրվել են երիթրոցիտների, լեյկոցիտների, հեմոգլոբինի քանակը, գունացուցիչը և լեյկոցիտային բանաձևը:

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ թույնը իր ազդեցության սկզբնական շրջանում առաջացնում է հեմոլիզ, որի հետևանքով իջնում է երիթրոցիտների, հեմոգլոբինի քանակը, լեյկոցիտային բանաձևում դիտվում է նեյտրոֆիլների քանակի ավելացում: 2 ժամ հետո դիտվել է լեյկոպենիա, լեկոցիտային բանաձևում՝ լիմֆո - և էոզինոպենիա: Տառւրինի և թույնի համակցված ազդեցության սկզբնական շրջանում դիտվել է երիթրոցիտների և հեմոգլոբինի քանակի նորմոքրոմ իջեցում, լեյկոցիտային բանաձևում՝ լիմֆոպենիա և նեյտրոֆիլոց: 2 ժամ հետո երիթրոցիտների և հեմոգլոբինի քանակը գտնվել է ելակետային մակարդակի սահմաններում, իսկ լեյկոցիտների ընդհանուր քանակը ելակետային մակարդակից ցածր է գտնվել ի հաշիվ լիմֆոցիտների: Այսպիսով տառւրինի և թույնի համակցված ազդեցության դեպքում ծայրամասային արյան ցուցանիշների փոփոխություններն ավելի մեղմ են արտահայտվում, ինչը պայմանավորված է տառւրինի հակաթունային և հակաօքսիդանտային ազդեցությամբ:

Հարկ է նշել, որ արյան քսուքներում հայտնաբերվել են պլազմային բջիջներ, որոնց առկայությունը պաշտպանական նշանակություն ունի: Այստեղից կարելի է եզրակացնել, որ տառւրինը նորիլիզացնում է օրգանիզմի փոխհատուցողական, պաշտպանական, մեխանիզմները ընդդեմ թույնի ազդեցության:

Բանալի բառեր. թույն, տառւրին, երիթրոցիտ, լեյկոցիտ, լիմֆոցիտ, նեյտրոֆիլ

**ԱՐԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ՝ ՈՐՊԵՍ
ՎԵՐԱԿԱՍԳՍՍԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ**

Մ. Հակոբյան

ՖԿԴՊԻ-ի ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբ. վարիչ՝ մ.գ.թ. Ա.Հովեյան

Արդիականություն: Մեր դարաշրջանում հասարակության արդի վիճակը պահանջում է նարդասիրություն կյանքի բոլոր պայմաններում: Դրա հետ կապված հատուկ ուշադրություն պետք է հատկացվի հաշմանդամներին, որոնք ունեն ֆիզիկական և մտավոր սահմանափակումներ: Ապահովելով հենաշարժողական ապարատի զարգացումը, կոփելով առողջությունը, բարձրացնելով օրգանիզմի աշխատունակությունը՝ ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և սպորտը նպաստում են բազմաթիվ ֆիզիկական շեղումների հաղթահարմանը, քանի որ հենց շարժումն է իրականացնում անհատի և շրջապատող աշխարհի միջև այն անմիջական կապը, որոնք ընկած են նրա հոգու և մարմնի զարգացման հիմքում:

Ելելով վերը նշվածից՝ աշխատանքի

ՆՊԱՏԱԿՆ է ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և հաշմանդամային սպորտի կիրառմամբ անրապնդել սահմանափակ կարողություններով անձանց առողջությունը, բարձրացնել նրանց շարժողական ակտիվությունը, խթանել համալիր ֆիզիկական վերականգնումը և սոցիալական ինտեգրումը հասարակության մեջ:

Աշխատանքի նպատակի իրագործման համար ընտրվել են հետևյալ խնդիրները.

1. Սոցիոլոգիական հարցումների միջոցով պարզաբանել սահմանափակ կարողություններով անձանց տեսական գիտելիքների մակարդակը ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և հաշմանդամային սպորտի վերաբերյալ:
2. Պարզաբանել ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և հաշմանդամային սպորտի դերը սահմանափակ կարողություններով անձանց կյանքում:
3. Բացահայտել ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և հաշմանդամային սպորտի ազդեցությունը սահմանափակ կարողություններով անձանց համալիր վերականգնման և սոցիալական ինտեգրման գործընթացում:

ՄԵԹՈԴՆԵՐԸ: Աշխատանքում դրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Գրական աղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն
2. Սոցիոլոգիական հարցում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ուսումնասիրելով գրական աղբյուրներում տեղ գտած ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և հաշմանդամային սպորտի բազմաթիվ հիմնախնդիրները կարելի է հանգել հետևյալ եզրակացության. սահմանափակ կարողություններով անձինք պարտադիր պետք է զբաղվեն ադապտիվ ֆիզիկական կուլտուրայով և հաշմանդամային սպորտով, որը կնպաստի առողջության ամրապնդմանը, շարժողական ակտիվության բարձրացմանը և սոցիալական ինտեգրմանը՝ որպես հասարակության լիիրավ անդամ:

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՖԿԴՊԻ Աղապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբ. վար. մ.գ.թ. Ա. Հ. Յովելյան

Համաշխարհային առողջապահական կազմակեր-պությունների տվյալներով, ներկայում լսողության խաճարումներով մարդկանց թիվը 40 միլիոնից ավելի է: Խլությունը պայմանավորված է ի ծնե կամ ձեռքբերովի լեզվական խոսքի անընդունակությամբ և խաճարմամբ: Աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, նրանց պարտադիր ուսուցումը իրականացվում է հատուկ կրթական հաստատություններում՝ մանկապարտեզներում և դպրոցներում: Նրանք սովորում են բառային խոսքին, շրբունքների ու ձեռքբերի շարժումնով կարողանում են կարդալ և հաղորդակցվել, ստանում են ընդհանուր միջնակարգ կրթություն: Գրական աղբյուրների ուսումնասիրություններից պարզվում է, որ աղապտիվ ֆիզիկական կուլտուրան և հաշմանդամայրն սպորտը նրանց ֆիզիկական և սոցիալական վերականգնման հիմնական միջոցներից մեկն է, որը վերադարձնում է նրանց վստահություն, ինքնքահարզանք, ինտեգրում և հարմարեցնում հասարակությանը, որտեղ ամենակարևորը առողջ ու ապագա գործունեությունն է: Ուստի օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում առանձնակի ուշադրություն դարձնել թույլ լսողություն ունեցող և խոլ աշակերտների համար կազմված ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրում տեղ գտած մարմնամարզական և աթլետիկական բաժիններում ներառված ֆիզիկական վարժությունների բովանդակությանը: Այն պահանջում է հատուկ ուղղվածություն, հաշվի առնելով նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որը կնպաստի լսողության խաճարում ունեցող դպրոցականների ֆիզիկական զարգացմանը և շարժողական պատրաստվածության բարելավմանը: Տվյալ ուղղությամբ մեր առջև դրված խնդրի վերաբերյալ Հայաստանում չկան խորը հետազոտություններ:

Նպատակ: Ուսումնասիրել և հետազոտման արդյունքում գտնել առավել արդյունավետ ֆիզիկական վարժություններ՝ մարմնամարզությունից և աթլետիկայից, որոնք կնպաստեն ավագ դպրոցահասակ աշակերտների ֆիզիկական զարգացման բարելավմանը և ընդհանուր ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացմանը: Հիմնավորել դրանց կիրառման մեթոդիկան ուսուցման գործընթացում:

Խնդիրներ՝

1. Ուսումնասիրել ավագ դպրոցահասակ երեխաների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակը:
2. Ընտրել և փորձարկել այն մարմնամարզական և աթլետիկական վարժությունները, որոնք կնպաստեն ավագ դպրոցահասակ երեխաների ֆիզիկական զարգացման և ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:
3. Հիմնավորել այդ վարժությունների կիրառման մեթոդիկան ուսումնական գործընթացում:

Հետազոտությունը կազմակերպվել և անցկացվել է լսողության խաճարումներով երեխաների Հատուկ կրթամալիրում, որտեղ ընդգրկվել են 16 - 17 տարեկան 43 ավագ դպրոցականներ: Մեր կողմից մշակված և ներդրված մարմնամարզական և աթլետիկական վարժությունների համալիրները տվեցին իրենց դրական տեղաշարժերը: Մինչ գիտափորձ և գիտափորձից ստացված տվյալները փաստում են այն մասին, որ բարելավվել են աշակերտների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, բարձրացել է նրանց շարժողական ակտիվությունը և բարելավվել նրանց ֆիզիկական զարգացման ցուցանիշները: Հիմք ընդունելով ստացված տվյալները, առաջարկվել է ծրագրում ներդնել մեր կողմից կազմված մարմնամարզական և աթլետիկական վարժությունները:

**ԶՐԱՅԻՆ ՄԻԶԱՎԱՅՐՈՒՄ ԲԵՏԱԽԵՍԻ ԻՆՔՍԱՍԱՔՐՄԱՆ ՈՐՈՇ
ՀԱՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Ա.Մ.ԱԱՐՈՅԱՆ, Գ.Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԵՊՀ Էկոլոգիական քիմիայի ամբիոն**

Զրային միջավայրում նյութերի քիմիական փոխարկումներն ուսումնասիրելիս մեծ ուշադրություն է դարձվում ազատ ռադիկալների և H_2O_2 -ի մասնակցությամբ ընթացող ռեակցիաներին: Գրականության մեջ բետահինները նշվում են որպես առանձին խումբ, որոնք իրենցից ներկայացնում են եռալկիլտեղակալված ամինաթթումների ներքին աղեր: Բետահինների նոլեկուլը պարունակում է դրական լիցքավորված չորրորդային ազոտի ատոմ, երբեմն երրորդային ծճմբի կամ թթվածնի ատոմներ, և բացասական լիցքավորված կարբօքսիլային խումբ [7]:

Բետահինները տարածված են բույսերում: Յիմնականում գտնվում են հացազգիների սերմերում, շաքարի ճակնդեղում, լորազգիների մոտ և այլն: Ավելի շատ տարածում ունի բետահին գլիկուլը /գլիցին բետահին/, որին հաճախ անվանում են պարզապես բետահին: Գլիցին բետահինը նյութափոխանակության կարգավորիչ է և մեթիլ խմբի դրոնոր: Ընդունված է համարել, որ բետահինը կարող է իջեցնել օրգանիզմում մեթինինի ծախսը մինչև 20%: Որպես մեթիլացնող ագենտ բետահինը կենդանի օրգանիզմներում մասնակցում է նյութափոխանակության պրոցեսներին՝ վերամեթիլացման ռեակցիաներում: Բետահինը օգտագործվում է նաև բժշկության մեջ: Այն պեպսինի հետ միասին օգտագործվում է գաստրիտի բուժման ժամանակ: Գլիցին բետահինը հետաքրքրություն է ներկայացնում նաև որպես օսմոկարգավորիչ, իր օսմոպաշտպանիչ հատկության շնորհիվ: Քանի որ բետահինը քնեռացած նոլեկուլ է, ապա այն ունի ջրի նոլեկուլները պահող հատկություն: Գլիցին բետահինը կանխում է դեհիդրատացիան և ապահովում է էլեկտրոլիտիկ հաշվեկշիռը: Թափանցելով բջջի մեջ, նա պաշտպանում է բջջային ֆերմենտները և մեմբրանը օսմոտիկ ապակտիվացնումից: Միաժամանակ ջրային և խոնային հաշվեկշիռն ապահովելիս բջջները կորցնում են էականորեն ավելի քիչ էներգիա: Գլիցին բետահինը հնարավորություն է ստեղծում բջջներին կարգավորել իրենց ծավալը օսմոտիկ սրբեսների ժամանակ: Յանդիսանում է նաև օսմոպաշտպանիչ, որը կուտակվում է բջջի ցիտոպլազմայում՝ կարգավորելով ճնշումը հիպերօսմոտիկ սրբեսների ժամանակ, երբ շրջակա միջավայրում ավելանում է օսմոտիկ ակտիվ նյութերի քանակությունը: Փորձերը ցույց են տվել, որ բետահինը ընդունակ է նախազգուշացնել յարդում ճարպերի կուտակումը, որից հետո այն ընդունվեց որպես էֆեկտիվ ճարպաքայքայիչ ագենտ [8]: Բետահինը օժտված է նաև կոսմետիկական հատկությունների լայն սպեկտրով: Այն օգտագործվում է մաշկի, մազերի խնամքի միջոցներում՝ որպես խոնավացնող նյութ [10]: Սինթետիկ բետահինները օգտագործվում են լվացող միջոցներում (ULU): ULU-ների մեջ բետահինը էականորեն իջեցնում է նրանց գրգռիչ ազդեցությունը, ինչպես նաև մեծացնում է փրփուրի ծավալը և կայունությունը, ուժեղացնում է կոնդիցիոններների ազդեցությունը, միևնույն ժամանակ բետահինը ինքը հանդիսանում է մեղմ կոնդիցիոններ [9]: Գլիցին բետահինը ունի նաև հակաբակտերյալ, խոնավեցնող, հակաֆունգիդային, լիպոտրոպային ակտիվություն. լավացնում է տարբեր տիպի միջոցների նկատմամբ մաշկի համապատասխանելիությունը, պաշտպանում է մազերը չորացումից. տալիս է մազերին փայլ, անտիստատիկ հատկություն, կարգավորում է կոսմետիկական միջոցների կաշելիությունը [8]: Որպես վիտամինի փոխարինող բետահինը կիրառվում է սննդարդյունաբերության մեջ: Բետահինը հաճախ մտցնում են կենդանիների և թռչունների սննդակարգում [2]: Ունենալով մեծ տարածվածություն՝ բետահինը մեծ քանակությամբ հայտնվում է բնական ջրերում: Այդ իսկ պատճառով նրա ինքնամաքրման հնարավորությունը հետաքրքրություն է ներկայացնում:

Փորձնական մաս: OH- ռադիկալների ռեակցիոնունակությունը բետահինի նկատմամբ որոշելու համար, ուսունասիրվել է նրա ազդեցությունը 4-նիտրոզո- N,N -դիմեթիլ անիլին (Sigma Aldrige, N,N-Dimethyl-4-nitrosoanilin, 97%) (ՊՆԴՄԱ) ներկանյութի գունաթափման արագության վրա թորած ջրում H_2O_2 -ի ֆոտոլիզի ժամանակ, որի արդյունքում առաջանում են OH- ռադիկալներ [3]:

**ՂՆԹ ՄԱՐԿԵՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՎԱՅՐԻ ՑԵՂԱԿԻՑՆԵՐԻ
ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐՈՒՄ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ԲԱԶՄԱՉԱՍՈՒԹՅԱՆ ԱՍՏԻճԱՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՀԱՍԱՐ**

Մ. Սահակյան

ԵՊՀ, կենսաբ. ֆակուլտետ, էկոլոգիայի և բնապահպան.ամբ., կ.գ.թ., պրոֆ. Ա.Յ. Եսայան

ՀՀ բնաշխարհին աչքի է ընկնում իր կենսաբազմազանությամբ՝ ֆլորայի և ֆաունայի հարուստ կազմով, նաև լանդշաֆտների և բուսականության տիպերով։ Ընդհանուր առնամբ, ՀՀ տարածքում աճող վայրի տեսակների ներկա վիճակը տագնապալի է։ Պահպանության կարիք ունեն Հայաստանի ֆլորայի տեսակների համարյա կեսը։

Բույսերի կենսաբազմազանության ուսումնասիրման տեսանկյունից ներկայումս մեծ կարևորություն է տրվում մշակաբույսերի վայրի ցեղակիցների ուսումնասիրությանը և պահպանությանը, քանի որ նրանք ունեն մեծ սելեկցիոն պոտենցիալ և կարող են օգտագործվել սելեկցիոն ծրագրերում։ Այդ նպատակով ուսումնասիրվել է *Triticum boeoticum* և *Tr. urartu* վայրի 11 պոպուլյացիաների գենետիկական բազմազանությունը՝ կիրառելով ժամանակակից մոլեկուլային կենսաբանական և կենսատեխնոլոգիական մոտեցումներ։

Ցորենի 7 օրեկան ծիլերից անջատել են ՂՆԹ STAB-ի կիրառման վրա հիմնված մեթոդով։ Բոլոր ուսումնասիրություններն անցկացվել են համաշխարհային գիտական պրակտիկայում ընդունված արդիական մեթոդներով և սարքավորումներով։ *Tr. boeoticum* և *Tr. urartu* տարբեր պոպուլյացիաներից անջատված ՂՆԹ-երից 18 RAPD պրայմերների կիրառմամբ անպլիֆիկացվել են ՂՆԹ-երի հատվածներ, որոնց միջոցով գնահատվել է ուսումնասիրվող վայրի ցորենների գենետիկական բազմազանության աստիճանը՝ կիրառելով Popgene 32, TreeView և MrEent 2.0 softwares համակարգչային ծրագրերը։ Կենսաբազմազանության գնահատման համար հաշվարկվել են ալլելների ընդհանուր քանակը, էֆֆեկտիվ քանակը, և եթի գենետիկական բազմազանության, Շենոնի ինֆորմացիոն ինդեքսները և պոլիմորֆ ալլելների տոկոսը։

Ըստ և եթի ինդեքսի կառուցվել է դենդրոգրամնա, որը ցույց է տալիս պոպուլյացիաների գենետիկական նմանությունը և տարբերությունը։ Համաձայն դենդրոգրամայի, *Tr. boeoticum* և *Tr. urartu* պոպուլյացիաների միջև դիտվում է միջազգության վառ արտահայտված մեկուսացում։

Այսպիսով, ՂՆԹ մարկերների կիրառումը լայն հնարավորություններ է տալիս հայտնաբերելու մշակաբույսերի վայրի ցեղակիցների պոպուլյացիաներում գենետիկական բազմազանության աստիճանը։ ՂՆԹ մարկերների արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է տարբեր գենետիկական մակարդակներում հաստատել դրանց գենոմային սպեցիֆիկությունը և հիվանդությունների նկատմամբ կայունության ապահովման մեջ դրանց դերը՝ մասնավորապես հերսապլոիդ բարդ գենոմներով ցորենների դեպքում։ Այս հետազատությունները մեծ կարևորություն ունեն նաև մշակաբույսերի վայրի ցեղակիցների սելեկցիոն պոտենցիալի գնահատման, կայուն պահպանության և կառավարման ժիշտ ռազմավարությունների մշակման համար։

Բանալի բառեր. սելեկցիոն պոտենցիալ, ՂՆԹ մարկերներ, 18 RAPD պրայմերներ, պոլիմորֆ ալլելներ, դենդրոգրամնա:

ԳԻՆԵՆՅՈՒԹԻ ԽԵՐԵՍԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Լ. Մովսիսյան

ԵՊՐ, կենսաբ. ֆակուլտետ, կենսատեխնոլոգիայի ամբ. կ.գ.թ. Ս. Ե. Արմենակյան

Յայտնի է, որ ըստ խերեսացման խաղողի սորտերը բաժանվում են երեք խմբի՝ լավ խերեսացող /Ոսկեհատ, ճիլար/, դժվար խերեսացող /Ոկածիթելի, Արենի/ և գործնականում չխերեսացող /Սսխալի, կախեթ/ , և որ ողջ աշխարհում լավ խերեսացողների քանակը անհամեմատ ավելի քիչ է, քան դժվար խերեսացող և գործնականում չխերեսացողներինը: Յաշկի առնելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս հանրապետությունում խիստ կրծատվել է վերը նշված հեշտ խերեսացող խաղողի սորտերի քանակը, օրախնդիր է դարձել նոր հեշտ խերեսացող սորտերի հայտնաբերումը, ինչպես նաև դժվար խերեսացող և չխերեսացող գինենյութերի խերեսացումը նոր տեխնոլոգիական հնարքների շնորհիվ: Դա էլ հանդիսանում է այս աշխատանքի նպատակը: Յետազոտվել է խերեսային թաղանթագոյացման գործնթացը մի շարք մաքրասորտ գինենյութերի մակերեսներին:

Թաղանթագոյացման գործնթացը գնահատելու համար, պայմանականորեն այն բաժանվել է հինգ փուլերի և որոշվել է այն ժամանակը, որը անհրաժեշտ է տվյալ փուլին բնորոշ թաղանթի առաջացման համար:

Ցույց է տրվել, որ բոլոր տեսակի գինենյութերը պարունակում են խերեսային խմորասնկերի բազմացման համար անհրաժեշտ սննդարար նյութերը ավելի քան բավարար քանակով: Խերեսային թաղանթագոյացումը, որն իրենից ներկայացնում է խերեսային խմորասնկերի բազմացուն գինենյութերի մակերեսներին, ճնշվում է ոչ թե սննդարար նյութերի բացակայությունից, այլև գինենյութերուն որոշ նյութերի ավելորդ քանակի առկայությունից: Այդ նյութերը իրենց ճնշող ազդեցությունը իրագործում են, երբ խերեսային խմորասնկերը իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան ստանում են սպիրտի օքսիդացման շնորհիվ, և որ այդ նյութերը ճնշող ազդեցություն չեն գործում, երբ նույն խմորասնկերը այդ էներգիան ստանում են խմորման ճանապարհով:

Մեր կողմից նաև ցույց է տրվել, որ խերեսային թաղանթագոյացումը ճնշող նյութերի կոնցենտրացիայի կրկնակի փոքրացումը հանում է այդ նյութերի ճնշումը թաղանթագոյացման գործնթացից, և որ նման կրկնակի նոսրացված չխերեսացող գինենյութերը ենթարկվում են խերեսացման: Նման արդյունք գինիների արտադրական գործնթացում կարելի է ստանալ գինենյութերի կուպաժավորման միջոցով:

Մեր կողմից նաև ցույց է տրվել, որ կուպաժավորելով դժվար խերեսացող և գործնականում չխերեսացող գինենյութերը հեշտ խերեսացող գինենյութերի հետ հիսուն/ հիսուն հարաբերությամբ, գործնականում կարելի է խերեսացման ենթարկել ցանկացած գինենյութը: Որպես հեշտ խերեսացող գինենյութեր կարելի է օգտագործել խաղողի Մեղրաբույր սորտից ստացված գինենյութը, որի քանակը հանրապետությունում բավականին մեծ է:

Այսպիսով մեր հետազոտությունների արդյունքների կիրառումը նոր հորիզոններ է բացում գինենյութերի մասսայական խերեսացման բնագավառում, ինչը հնարավորություն է ընձեռում խիստ ընդլայնել խերեսային գինիների տեսականին:

Բանալի բառեր՝ խերես, խերեսացում, թաղանթագոյացում, խմորասնկեր:

ՅՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԶՐԵՐԻ ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

S. Առաքելյան

ԵՊՀ, կենսաբ. ֆակուլտետ, էկոլոգիայի և բնապահպան.ամբ. կ.գ.թ., պրոֆ. Կ.Վ. Գրիգորյան

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացմանը նպաստող կարևոր գործոններից մեկը ոռոգումն է: Ոռոգման ժամանակ փոփոխվում են հողի օդային և ջերմային ռեժիմները, ֆիզիկական, մեխանիկական հատկությունները ու քիմիական կազմը: Այդ փոփոխությունները պայմանավորող հիմնական գործոններից մեկը հանդիսանում է ոռոգիչ ջրերի քիմիական բաղադրությունը: Պրակտիկան ցույց է տվել, որ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացմանը նպաստում է կեղտաջրերի օգտագործումը: Սակայն կեղտաջրերը անցնելով բնական ջրային օբյեկտներ կարող են առաջացնել անթույլատրելի աղտոտում: Ուստի, մինչև ոռոգման նպատակով օգտագործելը, անհրաժեշտ է կատարել կեղտաջրերով աղտոտված բնական ջրերի քիմիական կազմի ուսումնասիրություններ:

Սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել աղտոտման աղբյուր հանդիսացող տարբեր գործոնների ազդեցությունը Յրազդան գետի ագրոքիմիական հատկությունները բնութագրող տարբեր ցուցանիշների վրա: Որոշվել է նիտրատային և ամիակային ազոտի, ֆոսֆորի, կալիումի պարունակությունը և միջավայրի ռեակցիան: Նմուշները վերցվել են Յրազդան գետի այնպիսի հատվածներից, որտեղ տեղի է ունենում ջրի ծախսի և քիմիական կազմի որոշակի փոփոխություններ: Նիտրատային ազոտը որոշվել է գունաշափական մեթոդով դիֆոսֆոֆենոլային թթվի միջոցով, նիտրատային ազոտը՝ Նեսլերի ռեակտիվի օգնությամբ, իսկ միջավայրի ռեակցիան՝ պոտենցոմետրիկ եղանակով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի ջրերը բնութագրվում են նիտրատային, նիտրիտային, ամիակային ազոտի, ջրալույժ ֆոսֆորի չնշին քանակությամբ, կալիումի բարձր պարունակությամբ և միջավայրի հիմնային ռեակցիայով:

Այսպիսով, լարորատոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Յրազդան գետի ջրերը ըստ հոսանքի ենթարկվում են աղտոտման և բնութագրվում ոռոգիչ ջրերի ագրոքիմիական հատկությունները բնորոշող ցուցանիշների՝ ազոտի, ֆոսֆորի, և կալիումի տարբեր պարունակություններով: Գետի ջրերը առաջին տեխնոգեն «հարվածը» ստանում են Յրազդան քաղաքի հատվածում, որի հետևանքով ազոտի տարբեր ծևերը և ֆոսֆորի ջրալույժ միացությունների պարունակությունը Սևանա լճի ջրերի համեմատությամբ, նկատելի բարձրանում է, իսկ կալիումինը՝ նվազում: Երկրորդ և հիմնական տեխնոգեն «հարվածը» Յրազդան գետի ջրերը ստանում են Գետափ և Դեմքչի գյուղերի հատվածում, որտեղ ընդունում են Երևան քաղաքի տարբեր արդյունաբերական ձեռնարկությունների բափոնները և կենցաղային կեղտաջրերը:

Յրազդան գետի ջրերը բնութագրվում են միջավայրի թույլ հիմնային և հիմնային ռեակցիաներով: Ստացված արդյունքները համեմատելով 26 տարի առաջ կատարված ուսումնասիրությունների հետ պարզվել են, որ Յրազդան գետի ներքին հոսանքում խիստ բարձրացել է ազոտի պարունակությունը, որը կապված է Երևան քաղաքի աճի և գետի ջրերում կենցաղային կեղտաջրերի ընդհանուր ծավալի մեծացման հետ:

Բանալի բառեր. ագրոքիմիական հատկությունները, Նեսլերի ռեակտիվի, դիֆոսֆոֆենոլային թթու:

Вопросы микробиологическая безопасность питьевой воды

А. Арутюнян., Г. Бадалян

ЕГУ руководитель Григорян К. , Лаборатория по биоконтролю пищевых продуктов,

Высоким риском для здоровья населения является использование питьевой воды, контаминированной патогенными и условно-патогенными бактериями.

Проведен анализ питьевой воды по показателям микробиологической безопасности. Проанализировано 46 проб питьевой воды из 9 районов г. Еревана . В образцах питьевой воды определялись следующие показатели микробиологической безопасности - общее число бактерий, общее количество колiformных бактерий, количество фекальных колiformных бактерий. Указанные показатели определялись в 100 мл воды методом вакуумной фильтрации, с последующим инкубированием мембранных фильтров на соответствующих селективных средах. Отбор проб воды проводился согласно Директиве ЕС 98/83/ (статья 6).

Из проанализированных 46 проб воды, 24 - соответствовали требованиям изложенным в Директиве ЕС 98/83/. В 8.7% проб отмечалось присутствие фекальных колiformных бактерий. Для подтверждения идентификации штаммов *E. coli* использовались хромогенные среды (HiMedia, India). В 28.3% образцов питьевой воды выявлены колiformные бактерии . Идентификация последних проводилась с использованием (Hi Rapid Coliform Test). Превышение общего числа бактерий отмечено в 41.2% проанализированных проб питьевой воды. При определении общего числа бактерий использованы пластинки 3M PetrifilmTM (USA). В отдельных образцах воды наблюдалось отсутствие роста бактерий из-за превышения допустимых количеств свободного хлора.

По результатам микробиологического анализа питьевой воды, проанализированные пробы распределены в три группы, по степени опасности идентифицированных бактерий: группа высокого риска – фекальные колiformные и общие колiformные бактерии в 100 мл проб воды ; группа умеренного риска - общие колiformные бактерии в 100 мл воды; группа низкого риска – превышение общего числа бактерий в 1 мл воды.

КАЧЕСТВО И БЕЗОПАСНОСТЬ ЙОГУРТОВ МЕСТНОГО ПРОИЗВОДСТВА

М Григорян., К. Григорян, М. Саргсян

ЕГУ, Лаборатория по биоконтролю пищевых продуктов

Йогурт – кисломолочный продукт, широко используемый в пищу как детьми младшего, дошкольного и школьного возрастов , так и взрослым населением. В качестве закваски для производства йогурта используется смесь чистых культур термофильного стрептококка (*Steptococcus thermophilus*) и молочнокислой болгарской палочки *Lactobacillus delbrueckii subsp. bulgaricus*), обладающей пробиотическими свойствами. Использование в пищу йогурта , содержащего более 10^7 кое/г живых клеток указанных бактерий способствует ингибированию патогенной микрофлоры желудочно-кишечного тракта человека. Требования микробиологической безопасности к указанному продукту следующие: в 10 г готового продукта не допускается присутствие *E. coli* , *St. aureus*, дрожжевых и плесневых грибов, в соответствие с требованиями Codex Alimentarius (CAC/243/2003).

Проанализировано 37 образцов йогурта , производимого тремя предприятиями Армении. 5 образцов не соответствовали показателям микробиологической безопасности по содержанию колiformных бактерий. В 27 образцах, из 37 проанализированных, обнаружены дрожжевые грибы.

Одновременно изучены отдельные физико-химические показатели - pH, активность воды и титруемая кислотность, влияющие на микробиологическую безопасность продукта. Результаты исследований указанных параметров показали, что высокие значения активности воды и pH, а также низкое значение титруемой кислотности ($aw > 0.98$; $pH>5.2$ и $TK<75^0T$) способствуют контаминации йогурта колiformными бактериями, среди которых наиболее часто отмечается наличие штаммов *E. coli* , в связи с их высокой адаптивностью к низким значениям pH. Контаминация готового продукта колiformными бактериями зависит в основном от гигиенических условий получения , транспортировки и переработки молока .

Присутствие дрожжевых грибов в йогурте не допускается, в соответствие с требованиями (Сан.ПиН, 2004; Codex Alimentarius 057/2004). Степень заспоренности дрожжевыми грибами образцов йогурта находилась в пределах от 10^3 до 5×10^4 кое/г. Идентифицировано 6 родов дрожжевых грибов. Наиболее высокой частотой встречаемости отличались *Saccharomyces cerevisiae* и *Rhodotorula spp*. Выявлено доминирование отдельных родов дрожжевых грибов для каждого предприятия.

ПОЛУЧЕНИЕ РЕКОМБИНАНТНОГО ШТАММА- ПРОДУЦЕНТА АМИНОКИСЛОТЫ АРГИНИНА, ПРИМЕНЯЕМОЙ В МЕДИЦИНЕ И ФАРМАКОЛОГИИ

М.А Оганесян., Иванян С.А, Асатрян С.Л., Микаелян Н.Э.,

АМИ, ЗАО «НИИ Биотехнологии»,

Науч. рук.: кан.биол.наук Мартикан А.Р., кан.биол.наук Овсепян А.С.

В медицине, фармакологии, пищевой промышленности и сельском хозяйстве с каждым годом возрастает потребность в различных биологически активных соединениях, в том числе аминокислотах.

Аминокислота L-аргинин входит в состав многих терапевтических препаратов и противовирусных средств. Применяется в кардиологии и иммунологии, поскольку является источником образования окиси азота (NO) – мощного сосудорасширяющего фактора и нейромедиатора, замедляет рост доброкачественных и злокачественных опухолей, способствует заживлению ран, регулирует выработку гормонов, полезен при заболеваниях почек, играет существенную роль в лечении или предотвращении цирроза печени и т.д. Аргинин широко применяется также в сельском хозяйстве. Его добавление к кормам, наряду с лизином и метионином, способствует быстрому росту животных, повышает яйценосность кур. Соли аргинина используются для сохранения пищевых продуктов.

Крупномасштабное получение L-аргинина основано на микробиологическом способе производства. Для усовершенствования штаммов-продуцентов аминокислот широко используется технология рекомбинантных ДНК. Целю настоящей работы является повышение аргинин-синтезирующей способности рекомбинантного штамма-продуцента.

В НИИ «Биотехнологии» с применением методологии генной инженерии на основе *Escherichia coli* сконструирован штамм-продуцент L-аргинина, несущий рекомбинантную плазмиду с геном argA, кодирующим синтез ключевого фермента биосинтеза L-аргинина N-ацетилглутаматсинтетазы, и с геном sacC бактерии *Bacillus subtilis*, ответственным за утилизацию сахарозы. Было установлено, что у этого штамма лимитирующей стадией на пути биосинтеза аргинина является превращение орнитина в цитруллин. Аминогруппа, необходимая для этого превращения, поставляется карбамоилфосфатом. Известно, что активность карбамоилфосфатсинтетазы, осуществляющий синтез карбамоилфосфата, ингибируется пиримидинами. Для исключения ингибирующего влияния пиримидинов, нами методом химического мутагенеза с использованием нитрозогуанодина у штамма-продуцента, синтезирующий 18 г/л аргинина, получена коллекция мутантов, устойчивых к аналогу пиримидина - 5-фторурацилу. Микробиологическим методом с использованием тест-культуры, а также проведением колбочной ферментации проведен отбор мутантов, среди которых выделены варианты, обладающие более высоким уровнем (до 21 г/л) синтеза L-аргинина. Таким образом, получение устойчивых к 5-фторурацилу мутантов позволило повысить аргинин-синтезирующую способность рекомбинантного штамма-продуцента на 16%.

Ключевые слова : Аминокислота L-аргинин, *Escherichia coli*, *Bacillus subtilis* , химический мутагенез, колбочная ферментация, рекомбинантная плазмида.

ԱՐՅԱՆ ԼԵՅԿՈՑԻՏԱՆԵՐԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ
ՖԱԳՈԹԻՏԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՍԳԻՎՈՍՏՈՄԱՏԻՏԱՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
Լ.Գ. Գրիգորյան, Տ.Ժ. Վարդանյան, ք.Ա. Սողոմոնյան, Գ.Ս. Ալբերտյան

ՂԲԻ պաթոֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆ Ս.Յ. Խաչատրյան
և թերապևտիկ ստոմատոլոգիայի ամբ ասիստ Զ.Գ. Պապիկյան-Մխոյան

Բժշկական գիտությունների ժամանակակից զարգացման էտապում, առանձին օրգաններում պաթոլոգիական պրոցեսները դիտվում են ոչ թե առաձնացված, այլ կապված ամբողջական օրգանիզմում գոյություն ունեցող փոփոխությունների հետ: Վերը նշվածը մեզ դրդեց ուսումնասիրել արյան մեջ լեյկոցիտների ֆագոցիտար ակտիվությունը խոցային և կատարալ գինգիվոստոմատիտների պայմաններում:

Ուսումնասիրությունները կատարվել են **ДЕНТА-ЭЛИТА** ստոմատոլոգիական պոլիկլինիկայում, այդ հիվանդությամբ տառապող 10 հիվանդների մոտ: Ստացված տվյալները ցույց տվեցին, որ կատարալ ստոմատիտի ժամանակ ավելանում է երիտասարդ նեյտրոֆիլների քանակությունը ծայրամասային արյան մեջ: Եթե առողջների մոտ այն կազմում է 10.5, ապա կատարալ ստոմատիտով հիվանդների մոտ 14.2, այսինքն ակտիվանում են օրգանիզմի պաշտպանողական հատկությունները: Խոցային ստոմատիտով երկարատև տառապողների մոտ ծայրամասային արյան մեջ քչանում է հեմոգլոբինի, էրիթրոցիտների և երիտասարդ նեյտրոֆիլների քանակությունը, որի հետևանքով իջնում է լեյկոցիտների ֆագոցիտար ակտիվությունը որը կազմում է 7.2, այսինքն թուլանում է օրգանիզմի պաշտպանողական ռեակցիան: Գոյություն ունեն քազմաթիվ աշխատություններ, որոնցում ապացուցվում է սերտ կապը ստամոքս-աղիքային տրակտի և նյութափոխանակության միջև, որոնք տեղի են ունենում յարդում և արյունաստեղծ օրգաններում:

Ստոմատիտի ժամանակ վիտամին B_{12} -ով բուժման հետևանքով հիմնականում վերականգնվում է թերանի լորձաթաղանթի ամբողջականությունը, ինչպես նաև վերականգնվում է հեմոգլոբինի, էրիթրոցիտների քանակությունը և լեյկոցիտների ֆագոցիտար ակտիվությունը: Քանի որ վիտամին B_{12} -ի ազդեցության մեխանիզմում կարևոր նշանակություն ունի արյան մեջ սպիտակուցների որոշակի քանակությունը, ապա B_{12} -ով բուժումը գուգորդվում է սպիտակուցների հետ:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՅՄՈՐՈՏՈՄԻԱՅԻՑ ՀԵՏՈ ՎԵՐԻՆ ԾՆՈՏԱՅԻՆ ԾՈՑԻ ԱՌԱՋԱՅԻՆ ՊԱՏԻ ԱՐԱՏԻ ՊԼԱՍՏԻԿ ՓԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ ՄԵՂՐԱՄՈՄԵ ԹԱՂԱՆԹԻ ԿԻՐԱՌԱՄԱՄԲ

Ա. Յ. Ենգիբարյան

ՀԲԻ դիմածնոտային վիրաբուժության ամբիոն, Վարիչ բգդ, պրոֆ. Յու.Ս. Պողոսյան

Դայմորոտոմիայից հետո բարդությունների կանխարգելման նպատակով, հատկապես պայմանավորված վերին ծնոտային ծոցի (ՎԾԾ) առաջային պատի արատով, առաջարկված են մի շարք պլաստիկ փակման եղանակներ (Բ.Ի Դունայվիցեր, 1988; Գ.Վ.Կրուչինսկի, Վ.Ֆիլիպպմեր, 1994; Յու.Ս. Պողոսյան համահեղինակներ 2004):

Սակայն մինչ այժմ չկա ընդհանուր ընդունված եղանակ, որը կբավարարի կլինիկայի պահանջներին: Առաջարկված եղանակները ունեն այս կամ այն թերությունները, որոնք սահմանափակում են դրանց կիրառումը:

Աշխատանքի նպատակն է վերին ծնոտային ծոցի առաջային պատի պլաստիկ փակման նոր եղանակի կլինիկական փորձարկում մեղրամոմե թաղանթի կիրառմամբ:

Մեր հսկողության տակ են գտնվում 18-64 տարեկան 34 հիվանդ, որոնք հետազոտվել են րնդիանուր ընդունված եղանակներով: Բոլոր վիրահատությունները կատարվել են ընդհանուր անզգայացման տակ: Դայմորյան ծոցի առաջային պատը մերկացնելուց հետո բոր մեքենայի օգնությամբ այն հատվել է ստեղծելով 1.5 տրամագծով արատ: Անջատված ոսկրը ժամանակավորապես պահպել է ֆիզիոլոգիական լուծույթում:

Ծոցի սանացիայից, քթի խոռոչի հետ ստորին քթային անցուղիով հաղորդակցություն ստեղծելուց հետո ծոցը վիրախծուծվել է յոդոֆորմե քսութով պատված վիրախծուծով եւ մի ծայրը դուրս է բերվել համապատասխան քթային անցուղի: Առաջային պատից հեռացված ոսկրը սեւեռվում է 40-45 միկրոն հաստության մեղրամոմե թաղանթի վրա որով փակվել է ստեղծված արատը: Ծոցի առաջային պատի շրջանի լորձաթաղանթ վերնոսկրային լաթը դրվել է իրեն տեղը և կարվել հանգուցավոր կարերով: Դետվիրահատական բարդություն՝ թշի հյուսվածքներից դեպի ծոց հյուսվածքների ներածման դեպք չի արձանագրված:

Առաջարկված եղանակով հիվանդների մոտ 6 ամսից մինչեւ 2.5 տարվա ընթացքում հիվանդության կրկնում չի արձանագրված:

Այսպիսով՝ հայմորիտների բուժման ժամանակ մեղրամոմե թաղանթով հայմորյան ծոցի առաջային պատի փակումը առաջարկվում է կիրառել որպես այլրութանքային եղանակ:

Պրոբեզային օթյակի լորձաթաղանթի վիճակը լրիվ շարժական թիթեղային պրոբեզների շուրջօրյա օգտագործման դեպքում:

Ծ.Ս. Շիրվանյան

ՀԲԻ օրթ.ստոմ. ամբիոն Թունյան Մ.Յու. ,Կարակյան Կ.Ա. Լալայան Բ.Կ. ,Լալայան Կ.Վ., ՀՅ ԱՆ ԱԱԻ Վիրաբուժական և ընտանեկան ստոմատոլոգիայի ամբիոն

Շարժական պրոբեզները, հատկապես թիթեղայինները, պատճառ են հանդիսանում մի շարք բարդությունների՝ պրոբեզային օթյակի հյուսվածքներում (1,2,4): Պրոբեզի ճնշումը ենթադրի հյուսվածքների վրա, որը ֆիլոգենետիկորեն հարմարեցված չի այդ ճնշմանը, բացասական ճնշումը, որը առաջանում է պրոբեզի բազիսի տակ՝ ֆունկցիոնալ բիոֆիզիկական աղդեզիայի հետևանքով, մնացորդային մոնոմերի տոքսիկո-ալերգիկ ազդեցությունը խանգարում են պրոբեզային օթյակի լորձաթաղանթի արյունա և լիմֆաշրջանարությունը(3,5): Պրոբեզի տակ ջերմաստիճանի խախտումը, ջերմոցային էֆեկտի առաջացումը, արտազատուկի, սննդային մնացորդների կուտակումը բարենպաստ պայմաններ են ստեղծում միկրոֆլորայի զարգացման համար և թուլացնում են լորձաթաղանթի պաշտպանիչ հատկությունները:

Դարց է առաջանում. ինչպես կանխել պրոբեզի կողմնակի ազդեցությունները: Այդ խնդիրը լուծելու համար խորհուրդ է տրվում պրոբեզների րեգլամենտացված օգտագործումը, նաև նոր բազիսային նյութերի հայտնաբերումը(6):

Բողբոքային պրոցեսի ժամանակ առաջին հերթին տուժում է պերիֆերիկ արնամատակարարումը: Դաշվի առնելով դա, մենք որոշեցինք հետազոտել պրոբեզային օթյակի լորձաթաղանթի մազանորների կայունությունը, այն մարդկանց մոտ, ովքեր գիշերը քնելուց հանում են պրոբեզները և այն մարդկանց մոտ, ովքեր գիշերը չեն հանում պրոբեզները:

Մազանոթային կայունությունը որոշում ենք վակուումային ապարատի օգնությամբ(1): Ապարատի միացնելուց հետո, եթե առաջանում է բացասական ճնշում (740 մմ սնդ.սյան) պլաստմասե ստերիլ խողովակը 7 մմ տրամագծով հպում ենք պրոբեզային օթյակի լորձաթաղանթի հետազոտվող հատվածին: Փափուկ հյուսվածքները ներքաշվում են խողովակի լուսանցք, անոթները գերարյունացվում են և առավել անկայունները պայթում են: Թափանցիկ խողովակի պատից երևում է, որ ժամանակահատվածից են առաջանում էքստրավազատներ, առաջացնելով հեմատոմա: Որպեսզի ստանանք ճշգրիտ տվյալներ բացառելով հիվանդությունները, որոնք կարող են ազդել անոթների կայունության վրա միաժամանակ ուսումնասիրվում են օրգանիզմի պերեֆերիկ անոթների ընհանուր վիճակը:

Որոշվում էր մազանորների կայունությունը պրոբեզային օթյակի և նախաբազկի միջին երրորդի շրջանում 30 մմ տրամագծով վակուումային կյուվետկայի օգնությամբ և 740 մմ սնդ.սյան վակուումի կիրառումով 2 րոպե տևողությամբ: Պրոբեզակիրներին հետազոտելիս մենք վակուումը կիրառում էինք 2 րոպեի ընթացքում, քանի որ ավելի քիչ ժամկետում էքստրավազատները քիմքի և անատամ ալվեուլար ելունի վրա չեն առաջանա այն հիվանդների մոտ, ովքեր չեն օգտագործել պրոբեզներ:

Պրոբեզային օթյակի լորձաթաղանթի մազանոթային կայունության որոշումը կատարում էինք կարծի քիմքի առաջային, միջին և հետին երրորդականում, ինչպես նաև ալվեուլար ելունի շրջանում:

Ընդհանուր հետազոտվել է 196 մարդ (89 տղամարդ և 107 կին), որոնց համար պատրաստվել է 311շարժական պրոբեզներ, որոնցից 107 լրիվ շարժական, 140 մասնակի շարժական, 64 բյուգելային: Հետազոտվող հիվանդների տարիքը 45-78 տարեկան էր: 196 հետազոտվողներից պրոբեզային օթյակի լորձաթաղանթի մազանոթային կայունության անկում նկատվել է 79 հիվանդի մոտ՝ (40.3%):

Բոլոր հիվանդներին մենք բաժանել էինք 2խմբի.

1-ին խմբում ընդգրկված եր 51 հիվանդ, որոնք գիշերը պրոթեզները չեն հանել: 39-ը հիվանդի մոտ՝ (76.4%) նկատվում էր պրոթեզային օթյակի լորձաթաղանթի մազանոթային կայունության անկում, հիպերեմիա, այտուցվածություն: 1-ին խմբից 33-ը օգտագործում էին մասնակի և լրիվ շարժական թիթեղային պրոթեզներ և չեն հանել գիշերը 3-8 տարվա ընթացքում: Նրանցից 25-ի մոտ հայտնաբերվել է պրոթեզային օթյակի արտահայտված բորբոքում և մազանոթային կայունության անկում: Յենատոնաները լորձաթաղանթում առաջանում էին 740 մմ սնդ.սյան վակուումի ժանամակ արդեն իսկ 10-30 վ. հետո: Միայն 8 մարդու մոտ է նկատվել լորձաթաղանթի մազանոթային կայունության աննշան անկում և շատ քիչ հիպերեմիա: 18 մարդ օգտագործել էին բյուգելային պրոթեզներ և չեն հանել քնելիս՝ 4-6 տարվա ընթացքում և սահմանափակվել էին միայն հիգիենիկ խնամքով: Նրանցից 14-ի մոտ պրոթեզային օթյակի հյուսվածքները բորբոքված էին, մազանոթների կայունությունը կտրուկ՝ նվազած, էքստրավազատները առաջանում էին 5-7 վ: Պրոթեզային օթյակից դուրս մազանոթների կայունությունը նորմալ էր:

45-50 տարեկան 4-ս անձանց մոտ, ովքեր 4-5 տարվա ընթացքում նույնպես գիշերը չեին հանել պրոթեզները, պրոթեզային օթյակի լորձաթաղանթում փոփոխություններ չեին նկատվում:

2-րդ խումբը կազմում էին 145 մարդ, որոնց համար պատրաստվել էր 238 պրոթեզ՝ 86 լրիվ շարժական, 106 մասնակի շարժական, 46 բյուգելային: Այս հիվանդները ռեգուլյար հանել են պրոթեզները գիշերը քնելիս: 145 պրոթեզակիրներից 40-ի մոտ՝ (27.5%) նկատվել էր պրոթեզային օթյակի լորձաթաղանթի մազանոթների կայունության աննշան անկում, էքստրավազատները առաջանում էին 40-60վ. ընթացքում՝ չնայած պրոթեզների երկարատև օգտագործմանը՝ 5-8 տարի: Մնացած 105-ի մոտ պրոթեզային օթյակի լորձաթաղանթը բաց վարդագույն է, չայտուցված, էքստրավազատները 2 րոպեի ընթացքում չեին առաջանում: Պրոթեզային օթյակի լորձաթաղանթի մազանոթային կայունության անկում նկատվել է այն մարդկանց մոտ, որոնց անամնեզում եղել են արյան հիվանդություններ, շաքարային դիաբետ, սիրտ-անոթայինհիվանդություններ, ռևմատիզմ, ալերգիկ վիճակներ և այլ պաթոլոգիաներ, որի հետևանքով տուժում է արյան պերիֆերիկ շրջանառությունը և ընկնում են օրգանիզմի պաշտպանողական հատկությունները: Այսպիսի հիվանդների մոտ մազանոթների կայունության փորձը նախաբազկի շրջանում լինում էր իջած, էքստրավազատները առաջանում էին 30-60 վայրկյանում:

Եզրակացություններ՝

- 1.Բոլոր հետազոտվող հիվանդների մոտ, որոնք օգտվել են պրոթեզներից, հայտնաբերվել է պրոթեզային օթյակի լորձաթաղանթի բորբոքում՝ 40.3% դեպքում: Այն հիվանդների մոտ, որոնք չեն հանել պրոթեզները գիշերը, բորբոքում նկատվել է 76.4% դեպքում: Այն հիվանդների մոտ, որոնք հանել են պրոթեզները գիշերը, բորբոքում նկատվել է 27.5% դեպքում:
- 2.Յիմնվելով ստացված տվյալների վրա, հարկ ենք համարում խորհուրդ տալ հանել լրիվ և մասնակի թիթեղային պրոթեզները գիշերը՝ անկախ նրանց կոնստրուկցիայից և հիգիենիկ խնամքի բնույթից:

**Գլխուղեղի ինսուլտ տարած հիվանդների պրոթեզային օթյակի
լորձաթաղանթի մակերեսային ջերմությունը եւ դիսկրիմինացիոն
գգայնության նակարուակը**

Լ.Ա. Ալոյան

ՀԲԻ օրթ.ստոմ. ամբ Թունյան Մ. Յու., Կարակյան Կ. Ա., Լալայան Բ.Կ., Լալայան Կ.Վ.,
ՀՀ ԱՆ ԱԱԻ Վիրաբուժական և ընտանեկան ստոմատոլոգիայի ամբիոն

